

## Աջակցություն ԵՄ Արևելյան գործընկերության երկրներին ակտիվների վերադարձի և կազմակերպված հանցավորության հետ կապված այլ հիմնական ոլորտների ուղղությամբ - II փուլ

Իրականացման 01.11.2024 - 31.10.2027  
Ժամանակահատված:

### Այլ երկրներ:

Ադրբեջան, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 1 000 000

Ընդհանուր € 1 000 000  
բյուջե:



### Նախագծի

### նկարագրություն:

ԵՄ փողոցից ֆինանսավորվող այս ծրագիրը նախատեսվում է իրականացնել Արևելյան գործընկերության տարածաշրջանում 36 ամիսների ընթացքում և հանդիսանում է նախկինում իրականացված գործողության II փուլը: Ծրագրի հիմնական նպատակն է կանխել և հակազդել կազմակերպված հանցավորությանը՝ հատկապես ակտիվների վերադարձի մեխանիզմների (քրեական և ոչ քրեական) արդյունավետության բարձրացման միջոցով: Ծրագրի իրականացման շրջանակում կներգրավվեն համապատասխան ազգային կառույցներ, մասնավորապես՝ Արդարադատության նախարարությունները, Դատախազության գրասենյակները, Ակտիվների վերադարձի և կառավարման մարմինները, ինչպես նաև Ֆինանսական հետախուզության ստորաբաժանումները: Տեխնիկական աջակցության հիմնական ձևերը ներառում են հետազոտական աշխատանքներ, կարողությունների զարգացման միջոցառումներ, ուսումնական այցեր, աշխատանքային խմբերի հանդիպումներ, ինչպես նաև տեխնիկական խորհրդատվություն և մենթորություն ընթացիկ գործերի վերաբերյալ:

### Ակնկալվող արդյունքներ:

- Համապատասխան ազգային մարմինների ներկայացուցիչներին կտրամադրվի հնարավորություն խորացնելու իրենց գիտելիքները զարգացող և ժամանակակից քաղաքականությանն առնչվող գործելակերպերի վերաբերյալ, որոնք նպաստում են կազմակերպված հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև ապօրինի ճանապարհով ձեռք բերված ակտիվների հայտնաբերման, պահպանման և արդյունավետ կառավարման բարելավմանը:
- Արևելյան գործընկերության երկրների պաշտոնյաներին կտրամադրվի բարձր մասնագիտական խորհրդատվություն և նպատակային աջակցություն՝ կազմակերպված հանցավորության հետ կապված ընթացիկ գործերի շրջանակում ակտիվների հայտնաբերման և վերադարձի գործընթացների արդյունավետ իրականացման համար: